ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆԱԽԱԳԾԱՆԱԽԱՀԱՇՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-1

«29» օգոստոս 2019թ.

ք.Երևան

ՀՀ պետական եկամուտների կոմիտեն, ի դեմս ՀՀ պետական եկամուտների կոմիտեի գլխավոր քարտուղար Է.Գևորգյանի, որը գործում է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ռ.Մալումյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է Հյուսիսային մաքսատուն-վարչության արդիականացման ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքների կատարման պարտավորությունը (այսուհետ՝ աշխատանք)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Աշխատանքը կատարվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից կատարվող աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե կատարվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող աշխատանք.

ա) Չընդունել աշխատանքը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի աշխատանքը պայմանագրին համապատասխանող աշխատանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու աշխատանքի համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) կատարված աշխատանքը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է աշխատանքի կատարման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան կատարված աշխատանքի արդյունքը, իսկ աշխատանքի արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել աշխատանքի կատարումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Նախագծային փաստաթղթերի մշակման ժամանակ՝

1) շինարարական ծրագրի կատարման համար օգտագործվող նյութերի տեխնիկական բնութագրերը կազմել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,

2) ներկայացնել կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,

3) ներկայացնել շինարարական ծրագրի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,

4) պատվիրատուին նախագծային փաստաթղթերը ներկայացնել թղթային և էլեկտրոնային տարբերակներով,

5) ներկայացնել ըստ աշխատանքների առանձին տեսակների կատարման օրացուցային գրաֆիկը:

3. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ աշխատանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1.Պայմանագրով Կատարողի կատարման ենթակա աշխատանքի գինը կազմում է **33 950 000 (Երեսուներեք միլիոն ինը հարյուր հիսուն հազար)** ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Աշխատանքի կատարման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն կատարված աշխատանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում աշխատանքի կատարման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող աշխատանք կատարելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված

գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են աշխատանքը կատարելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.4.1 Շինարարական ծրագրերի կատարման ընթացքում նախագծային շեղումներ առաջանալու դեպքում նախագծողը պատվիրատուին վճարում է տուգանք՝ յուրաքանչյուր արձանագրված շեղման հետևանքով առաջացած կորստի չափով: Ընդ որում՝

ա. շեղում է համարվում աշխատանքների կատարման ընթացքում Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների ի հայտ գալը, իսկ տուգանքի չափը հավասար է լրացուցիչ ծավալի աշխատանքների չափին,

բ. կորուստ են համարվում նախագծային այնպիսի շեղումները, որոնք հանգեցնում են փաստացի կատարված աշխատանքների փոփոխմանը (քանդման, վերակառուցման և այլն) և լրացուցիչ աշխատանքների կատարմանը, իսկ տուգանքի չափը հավասար է կորստի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված և փորձաքննական եզրակացություն ունեցող նախագծային փաստաթղթերի աշխատանքների ամփոփ նախահաշվով չնախատեսված աշխատանքների ծախսերի համար նախատեսված չափը, ներառյալ ավելացված արժեքի հարկը, գերազանցող լրացուցիչ ծավալի աշխատանքների հանրագումարի չափին:[20]

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերրորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված

Հավելված N 1
«29» օգոստոս 2019թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-1 ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Աշխատանքի							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	միավոր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	Կատարման ժամկետը և վայրը՝
1	71241200/5	**<u>ՀՀ պետական եկամուտների կոմիտեի Հյուսիսային մաքսատուն-վարչության արդիականացման ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման նախագծա-նախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ</u>** Նախագծման ընդհանուր տարածքը ենթակառուցվածքներով կազմում է 5.5 հա /հատակագծերը կցվում են/: Ա. Նախագիծը կազմել՝ հիմք ընդունելով ՀՀ կառավարությանն առընթեր քաղաքաշինության պետական կոմիտեի նախագահի 2017 սեպտեմբերի 11-ի թվականի N-128-Ն հրամանով հաստատված բնակելի, հասարակական, արտադրական շենքերի և շինությունների նախագծային փաստաթղթերի կազմը և բովանդակությունը սահմանող կանոնները: Բ. Շինարարական օբյեկտի նախագծային փաստաթղթերը մշակել երկու փուլերով. առաջին փուլ «Նախագիծ», երկրորդ փուլ «Աշխատանքային փաստաթղթեր»: «Նախագիծ» փուլը մշակել Կատարողի կողմից ներկայացված էսքիզային նախագծի հիման վրա /որը նախապես պետք է համաձայնեցվի Պատվիրատուի հետ/ և հետևյալ մասերով: 1-ին մաս. ուղղաձիգ հատակագծում, ներտարածքային ինժեներական ենթակառուցվածքներ, երկաթբետոնե և ասֆալտբետոնե ճանապարհների և հարթակների պատրաստում: 2-րդ մաս. արտաքին ինժեներական ցանցեր, վարչական և օժանդակ շինություններ, հանրակացարան, ծածկարաններ, արտաքին պարիսպ, ներքին ցանկապատեր, ելքի և մուտքի անցակետեր, ճանապարհային	դրամ	33 950 000	33 950 000	1	Պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված 45 օրացուցային օրվա ընթացքում: Շիրակի մարզի Գյումրի քաղաքում տեղակայված «Գյումրի-17» զորամաս /Խրիմյան Հայրիկ փողոցին հարող տարածք/

		նշաններ, ցուցանակներ, գծանշումներ, արտաքին լուսավորություն, շենք-շինությունների ինժեներական համակարգեր (ջրամատակարարում, ջրահեռացում, էլ. մատակարարում, օդափոխություն, օդորակում, ջեռուցում, հակահրդեհային ահազանգման համակարգ, տեսահսկման ձայնային ազդարարման, տեղեկատվական համակարգեր), ներքին հարդարման աշխատանքներ, բարեկարգում, կանաչապատում: «Աշխատանքային փաստաթղթեր» փուլը մշակել հաստատված «Նախագիծ» փուլի հիման վրա՝ ներառելով բոլոր տեսակի շինմոնտաժային աշխատանքների գծագրերը լրիվ կազմով: Նախագծով նախատեսել. • Վարչական շենք՝ ա) մաքսային գործառույթներ իրականացման մասնաշենք՝ սպասարկման սրահով մոտ 1250քմ: բ) ոստիկանության գործառույթների իրականացման մասնաշենք՝ սպասարկման սրահով, բանկային բաժանմունքների, ապահովագրական կազմակերպությունների մասնաշենքեր՝ ընդհանուր մակերեսը մոտ 2200քմ: գ) ճաշարան՝ մոտ 520 քմ: • Ռենտգեն ճառագայթում զննման մասնաշենք՝ մոտ 320 քմ. • Ելքերի և մուտքերի անցակետեր. • Տնտեսական մասնաշենք մոտ 1000 քմ մակերեսով, որտեղ տեղակայվելու են տրանսֆորմատային ենթակայանը, դիզելային գեներատորը, պոմպակայանը՝ օրվա կարգավորիչ ջրամբարով և պահեստային մասը. • Մաքսային հսկողության տարածքից դուրս ծառայողական 2 հարկանի բնակելի շենք (հանրակացարան) 30 բնակարանով ՝ միջինը 60-70 քմ բնակելի մակերեսով. • Բեռնատար ավտոմեքենաների համար առանձին մեկ մուտքի և մեկ ելքի հոսքագիծ. • Մարդատար ավտոմեքենաների համար երկու առանձին մուտքի և մեկ ելքի հոսքագիծ. • Բեռնատար ավտոմեքենաների մուտքից հետո նախատեսել ավտոկայանատեղի՝ 8-10 ավտոմեքենաների համար. • Մարդատար ավտոմեքենաների համար մաքսային հսկողության տարածքում ավտոկայանատեղի՝ 240-250 ավտոմեքենաների համար. • Տիրազուրկ և պահպանման ենթակա ավտոմեքենաների համար ավտոկայանատեղի՝ 50-60 ավտոմեքենաների համար, ծածկարանի					

		տակ, մաքսային հսկողության տարածքում. • Բեռնաթափման հարթակին կից մարդատար ավտոմեքենաների ավտոկայանատեղի՝ 30-40 ավտոմեքենաների համար. • Մարդատար և բեռնատար ավտոմեքենաների մուտքերի միջանկյալ հատվածում, մաքսային հսկողության տարածքից դուրս, ավտոկայանատեղի 80-90 ավտոմեքենայով այցելուների համար: • Մաքսային հսկողության տարածքում աշխատակիցների ծառայողական ավտոմեքենաների կայանատեղի՝ 90-110 ավտոմեքենաների համար: - մաքսային հսկողության տարածքում բեռնատար ավտոմեքենաների ճանապարհը՝ մուտքից մինչև ելք, նախատեսել երկաթբետոնյա հիմքով, - մաքսային հսկողության տարածքում և տարածքից դուրս մարդատար ավտոմեքենաների ճանապարհը և ավտոկայանատեղերը նախատեսել ասֆալտբետոնե հիմքով, - մաքսային ձևակերպումների կենտրոնի արտաքին սահմանի պարիսպը նախատեսել քարից՝ 2.5 մետր բարձրությամբ, կենտրոնի սահմանի ներսում ցանկապատերը նախատեսել մետաղական ցանցից՝ 2.0 մետր բարձրությամբ, - վարչական շենքերում և ճաշարանում նախատեսել ջրամատակարման, ջրահեռացման, էլ. մատակարման, օդափոխության, օդորակման, ջեռուցման, հակահրդեհային ահազանգման, տեսահսկման, ձայնային ազդարարման և տեղեկատվական համակարգեր, - նախատեսել ներտարածքային լուսավորության, տեսահսկման, ձայնային ազդարարման, հակահրդեհային ջրամատակարարման, հեղեղային ջրահեռացման համակարգեր, - վարչական օժանդակ շինությունների հիմքերի արտաքին պատերին ծածկի կոնստրուկտիվ լուծումները տալ համաձայն տեղանքի երկրաբանական հետազոտությունների հաշվետվությունների արդյունքների, - հաշվի առնելով , որ օբյեկտը դասվում է բարձր (IV-րդ կատեգորիա) ռիսկայնության աստիճանի դասակարգում ունեցող հատուկ և կարևորագույն նշանակություն ունեցող օբյեկտների շարքին, անհրաժեշտ է, որպեսզի Կատարողը նախագծային փաստաթղթերը ենթարկի պետական համալիր փորձաքննության, այդ թվում՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման փորձաքննության՝ իր միջոցներով: <u>*Լրացուցիչ պայմաններ*</u> - նյութերի տեխնիկական բնութագրերի մանրամասն և սպառիչ սահմանում, - նախագծման վերաբերյալ գործող կարգի պահանջներից զատ՝ մանրամասն չափագրման տվյալների, աշխատանքների ծավալների հաշվարկման տեղայնացված մասնագրերի ներկայացում,					

		- ըստ տեխնիկական պայմանների՝ փաթեթների պատրաստում, նախագծերի համաձայնեցում /Գյումրու քաղաքապետարան, համապատասխան այլ մարմիններ/, - ելակետային համաձայնեցված փաստաթղթերի կազմում, - պատվիրատուին նախագծային փաստաթղթերի ներկայացում՝ թղթային /հինգ օրինակ/ և էլեկտրոնային տարբերակներով:					

** աշխատանքի կատարման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011028363
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝

Է.Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ
ք. Երևան, Հ.Էմին 80շ. բն. 26
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822122781001
ՀՎՀՀ 00125931

«ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ռ.Մալումյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 2
«29» օգոստոս 2019թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-1 ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը*	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի												
				Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019 թ. պետական բյուջեի միջոցներով նախատեսված հատկացումների հաշվին, ըստ ամիսների՝ ընդ որում												
				հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	**Ընդամենը**
1	5134	71241200/5	Հյուսիսային մաքսատուն-վարչության արդիականացման ծրագրի շրջանակներում Գյումրի քաղաքում ավտոտրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումների միասնական սպասարկման կենտրոնի կառուցման նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ									33 950 000	33 950 000	33 950 000	33 950 000	**33 950 000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ.Խորենացու-3,7
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011028363
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՊԵԿ գլխավոր քարտուղար՝
Է. Գևորգյան
(ստորագրություն)
Կ.Տ

ԿԱՏԱՐՈՂ
«ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ
ք. Երևան, Հ.Էմին 80շ. բն. 26
«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2052822122781001
ՀՎՀՀ 00125931

«ԱՏՐԻՈՒՄ ԹԻՄ» ՍՊԸ-ի տնօրեն՝
Ռ. Մալումյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված 3
«29» մարտի 2019թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-1 ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

N	Կատարված աշխատանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց	Աշխատանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
«29» դեկտեմբեր 2019թ. կնքված
ՊԵԿ-ՀՄԱ-ԱՇՁԲ-1 ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____ (Պատվիրատուի անվանումը)-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____ (Կապալառուի անվանումը)-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 20 թ. _____ (պայմանագրի կնքման ամսաթիվը) -ին կնքված N _____ (պայմանագրի համարը) գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

Աշխատանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն